«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանների պաստրաստվածությունը դպրոցին

Հետազոտող ուսուցիչ՝Հարությունյան Տիրուհի

Ուսումնական հաստատություն՝ Ն.Վ. Գոգոլի անվան համար 35 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….. 3

1. Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին …… 5
2. Վեցամյա երեխայի հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին ……. 15
3. Սոցիալական վերլուծություն …… 19

Եզրկացություն …… 22

Օգտագործված գրականության ցանկ …… 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը վերջին շրջանում լուրջ վերափոխումների է ենթարկվել, ներդրվել են նոր ծրագրեր, փոխվել է նրա կառուցվածքը: Գնալով բարձր պահանջներ են դրվում վեցամյա երեխաների վրա: Դպրոցում այլընտրանքային մեթոդների մշակումը թույլ է տալիս երեխաներին ուսուցանել ավելի ինտենսիվ ծրագրով:

Դրոցական կրթության համակարգի ամենակարևոր խնդիրը երեխայի անհատականության համակողմանի զարգացումն է և դպրոցին նախապատրաստելը: Կրթության և ուսուցման կազմակերպման համար կյանքի բարձր պահանջներն ակտիվացնում են նոր, առավել արդյունավետ հոգեբանական և մանկավարժական մոտեցումների որոնումները՝ ուղղված ուսուցման մեթոդները կյանքի պահանջներին համապատասխանեցնելուն: Դպրոցական հասունության խնդիրը՝ որպես վեց տարեկան երեխայի օրգանիզմի համակարգված ուսուցման պատրաստակամություն, ահռելիորեն աճել է հանրապետության ողջ կրթական համակարգի բարեփոխման շրջանում և այժմ վերածվել է բժշկամանկավարժական խնդրի: Երկարատև համակարգված պարապմունքներ, ֆիզիկական ակտիվության նվազում, զգալի ստատիկ բեռ, նոր պարտականություններ. այս ամենը մեծ դժվարություններ են, և շատ երեխաներ ունենում են մարմնում փոփոխություններ, որոնք թույլ են տալիս խոսել «դպրոցական ցնցումների», «դպրոցական սթրեսի», «հարմարվողականության» մասին:

Վեց տարեկանից սկսած ուսուցիչները պետք է գնահատեն երեխայի ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացման մակարդակը, որն անհրաժեշտ է, որպեսզի նա հաջողությամբ յուրացնի դպրոցական ծրագիրը՝ չվնասելով իր առողջությունը: Ուստի ուսուցիչը պետք է գնահատի ոչ միայն ուսումնական գործընթացի կազմակերպումը, այլև 6-ամյա աշակերտների պատրաստակամությունը՝ մասնակցելու այս գործընթացին, առողջապահական ողջամիտ միջոցներ մշակի:

Վեցամյա երեխան ունակ է ձևավորել և զարգացնել ընդհանուր գծեր: Այդ գծերն են նպատակասլացությունը, կազմակերպվածությունը, կանխամտածվածությունը :

Անհրաժեշտ է որպեսզի երեխաները մինչ դպրոց հաճախելը տիրապետեն իրենց գործունեությունը կազմակերպելու միջոցներին ։

Հետազոտության համար մենք ընտրել ենք այս թեման, ավելի խորն ուսումնասիրելու համար այն հարցը, թե արդյոք ինչպիսի՞ն պետք է լինի վեց տարեկան երեխաների պատրաստվածությունը դպրոցին։

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման , դպրոցահասակ երեխային ներկայացվող պահանջների և այլնի վերաբերյալ՝ այս հետազոտական աշխատանքում կանդրադառնանք այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի վեցամյա երեխայի պատրաստվածությունը դպրոցին և ո՞ր երեխան է համարվում պատրաստ հաճախելու դպրոց։

Հետազոտության նպատակն է բացահայտել, թե որ վեցամյա երեխան է պատրաստ դպրոց հաճախել։

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
- բացահայտել ծնողների դերը վեցամյա երեխայի դպրոցի պատրաստվածության հարցում։
- առանձնացնել այն գործոնները, որոնք մեծ դեր են կատարում և նպաստում են վեցամյա երեխային պատրաստ լինել դպրոց հաճախելուն։

Թեմայի մասին առավել մանրամասն կներկայացնենք ստորև։

1. ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՊԱՍՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ

Երեխայի անհատականության զարգացման հետ կապված խնդիրների հաջող լուծումը, ուսուցման արդյունավետության բարձրացումը և բարենպաստ մասնագիտական զարգացումը մեծապես պայմանավորված են նրանով, թե որքանով է ճշգրիտ հաշվի առնվում երեխաների դպրոցական պատրաստության մակարդակը:

Ավանդաբար կան վեցամյա երեխայի համար դպրոցական հասունության երեք ասպեկտներ[1]՝

1. ինտելեկտուալ,
2. զգացմունքային,
3. սոցիալական:

Ինտելեկտուալ հասունությունը հասկացվում է որպես տարբերակված ընկալում (ընկալման հասունություն), ներառյալ ֆոնից կերպարի նույնականացումը, համակենտրոնացում, վերլուծական մտածողություն, որն արտահայտվում է երևույթների միջև հիմնական կապերը ըմբռնելու ունակությամբ., տրամաբանական մտապահման հնարավորությունը, օրինաչափություն վերարտադրելու ունակությունը, ինչպես նաև ձեռքի նուրբ շարժումների զարգացումը և զգայական շարժողական համակարգումը: Կարելի է ասել, որ այսպես հասկացված ինտելեկտուալ հասունությունը մեծապես արտացոլում է ուղեղի կառուցվածքների ֆունկցիոնալ հասունացումը:

Զգացմունքային հասունությունը, ընդհանուր առմամբ, հասկացվում է որպես իմպուլսիվ ռեակցիաների նվազում և ոչ այնքան գրավիչ առաջադրանք երկար ժամանակ կատարելու կարողություն:

Սոցիալական հասունությունը ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու անհրաժեշտությունը և նրա վարքագիծը մանկական խմբերի օրենքներին

[1] Մանուկյան և ուրիշներ Լ., Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2008, էջ 108

ստորադասելու ունակությունը, ինչպես նաև դպրոցական ուսումնական իրավիճակում աշակերտի դեր խաղալու կարողությունը:

Դպրոցին ինտելեկտուալ պատրաստվածությունը կապված է մտավոր գործընթացների զարգացման հետ՝ ընդհանրացնելու, առարկաները համեմատելու, դրանք դասակարգելու, էական հատկանիշներն ընդգծելու և եզրակացություններ անելու ունակությամբ: Երեխան պետք է ունենա գաղափարների որոշակի լայնություն, այդ թվում՝ փոխաբերական և տարածական, համապատասխան խոսքի զարգացում և ճանաչողական գործունեություն:

Տարիքային զարգացման որոշակի շրջաններում երեխայի հոգեկան, ֆիզիկական, սոցիալական զարգացումն ընթանում է զարգացման ընդհանուր օրինաչափություններով, թեև տարիքային այդ փուլերի մեջ յուրաքանչյուր տարիք և ժամանակահատված ևս ունի իր զարգացման առանձնահատկությունները: Վեց տարեկան երեխան, որը գտնվում է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքային շրջանների սահմանագծում, բնականաբար մտավոր զարգացման մակարդակով, խոսքով, աշխարհընկալմամբ, շփումներով, ֆիզիկական և ֆիզիոլոգիական հնարավորություններով առանձնանում է կրտսեր դպրոցականից: Դպրոց հաճախելիս փոխվում են նրա ապրելաձևը, հիմնական գործունեությունը, դիրքը միջավայրում, փոխվում են նաև մեծերի կողմից նրան ներկայացվող պահանջները: Մինչև դպրոց հաճախելը երեխան չի կատարում այնպիսի պարտականություններ, որոնք պարտադիր են և պահանջում են որոշակի ջանքեր: Նախադպրոցական տարիքում հիմնականը խաղն է, թեև ուսուցումն ու տարբեր հանձնարարությունների կատարումն իրենց տեղն ունեն ուսումնադաստիարակչական գործընթացում:

Դպրոցական ուսուցումը պահանջում է մտավոր լարվածություն, կամային ջանքեր, բարձր աշխատունակություն: Այդ ամենը վեց տարեկան երեխայի մոտ երբեմն առաջացնում է բացասական վերաբերմունք ու հույզեր դպրոցի նկատմամբ: Դրա հավանականությունն ավելի մեծ է, եթե երեխան նախապատրաստված չէ դպրոցական ուսուցմանը, իսկ մեծահասակները չեն օգնում նրան՝ ուսուցման սկզբնական շրջանում հաղթահարելու դժվարությունները:

Վերջին տարիներին գործածական է դարձել «դպրոցական ապահարմարողականություն» հասկացությունը. այդպես են անվանում երեխայի ուսումնական գործունեության և վարքի այն խախտումները, որոնք արտահայտվում են դպրոցի կյանքին չհարմարվելու, ուսուցման ընթացքում մշտապես դժվարություններ կրելու, համադասարանցիների հետ հաճախ բախվելու երևույթները, որոնց պատճառով երեխան կարող է դառնալ անկարգապահ, ագրեսիվ, անհանգիստ, նյարդային:

Հայտնի է, որ դպրոցական ապահարմարողականությունը հաճախ կարող է չազդել երեխայի կարգապահության, առաջադիմության վրա, բայց բացասաբար անդրադառնալ նրա ներքին ապրումների և հոգեվիճակի վրա:

Վեց տարեկան երեխան իր վարքով, առաջադիմությամբ գոհացնում է մեծահասակին, բայց նրա մեջ կուտակվում են ներքին լարվածություն, տագնապ, վախ: Երեխայի դպրոցական պատրաստությունը և դպրոցին հարմարվելու հանգամանքները հատուկ ուշադրություն են պահանջում: Շատ կարևոր են ախտորոշման և կարգավորող աշխատանքները, որոնք կօգնեն երեխային ուսումնական գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար:

Մեծ ուշադրության է արժանի նաև վեց տարեկան առաջին դասարանցիների համար բարենպաստ միջավայրի ստեղծման խնդիրը, քանի որ երեխան դպրոց է գալիս ազատ միջավայրից, ուր նրան ներհատուկ են խաղն ու զվարճալիքները, դպրոցում դրանց համար համապատասխան միջավայր, կահավորում է անհրաժեշտ, պետք է ապահովել նաև վեց տարեկան երեխայի ազատ տեղաշարժման, խաղերի ու վարժությունների, ակտիվ ուսումնառության և հանգստի համար անհրաժեշտ պայմաններ[2]:

Վեց տարեկանում երեխան կորցնում է այն անմիջականությունն ու պարզամտությունը, որն ուներ մինչ այդ: Այդպիսի փոփոխությունների պատճառը երեխայի գիտակցության մեջ ներքին և արտաքին կյանքի տարբերակումն է: Վեց

---

[2] Гуткина Н. И., Психологическая готовность к школе. 4-е изд., перераб. и дополн. СПб.: Питер, 2004, էջ 87

տարեկան երեխան արագորեն աճում է ֆիզիկապես, դրա հետ մեկտեղ տեղի են ունենում որոշակի փոփոխություններ նրա օրգանիզմում: Երեխան կտրուկ փոխվում է, դառնում քմահաճ, վարքում նկատվում են որոշակի ձևական, արհեստական դրսևորումներ: Կարևորագույն ձեռքբերումներից է սեփական ես-ի գիտակցումը և ներքին սոցիալական դիրքի ձևավորումը: Այդ տարիքում ի հայտ է գալիս վառ արտահայտված ձգտումը՝ կյանքում մեծահասակի դիրք զբաղեցնելու և նոր գործունեություն կատարելու: Դա արտահայտվում է դպրոցականի սոցիալական դիրք զբաղեցնելու ձգտումով: Ճգնաժամի միջոցով վեց տարեկան երեխան սկսում է գիտակցել սեփական զգացմունքները, հոգեվիճակները, հասկանում է, թե ինչ է նշանակում «Ես ուրախ եմ», «Ես տխուր եմ» և այլն: Կարողանում է սեփական գործողություններին և զգացմունքներին գիտակցված գնահատական տալ: Այս տարիքի հիմնական կարևոր ձեռքբերումը ինքնասիրության և ինքնագնահատականի ձևավորումն է: Այս փուլում խիստ կարևորվում է երեխային շրջապատող մեծահասակների դերը: Այսինքն՝ վեց տարեկան հասակում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին, որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար: Այս տարիքի երեխաների ներառումը ուսումնական գործունեության մեջ պահանջում է հստակ պայմաններ, ուսուցման խաղային մեթոդներ և անհատական մոտեցում:

Ուսուցումը դպրոցում պահանջում է մտավոր լարվածություն, կամային ջանքեր, բարձր աշխատունակություն: Այս ամենը դժվար է ու հոգնեցնող վեց տարեկան երեխայի համար և երբեմն դպրոցի վերաբերյալ առաջացնում է բացասական վերաբերմունք: Դպրոցին պատրաստ լինել՝ չի նշանակում միայն կարդալ, գրել, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը. սկսած ֆիզիկական զարգացումից մինչև հատուկ գիտելիքների և կարողությունների առկայությունը: Առանձնացվում է դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների 4 խումբ՝

1. Սոցիալական, որը ներառում է երեխայի՝ հասակակիցների հետ շփվելու, իր վարքը խմբի կանոններին ենթարկելու, աշակերտի դերը կատարելու պահանջը:
2. Ֆիզիկական, որն ընդհանուր առողջությունն է, ընդհանուր ֆիզիկական զարգացումը, կանոնավոր քաշը, հասակը, մկանային տոնուսը,

տեսողությունը, լսողությունը, մատների նրբաշարժումների զարգացվածության աստիճանը:

3. Հուզակամային, որը անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է:
4. Իմացական, որը ներառում է հետևյալ գործընթացները՝ ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն:

Վեց տարեկան երեխայի դպրոցական պատրաստվածության և դպրոցին հարմարվելու հանգամանքները հատուկ ուշադրություն են պահանջում և անհատական մոտեցում, որն իրականացվում է ծնողների և մանկավարժների կանոնավոր համատեղ աշխատանքով: Վեց տարեկան առաջին դասարանցին հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նա պահպանում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողությունը, ուշադրության յուրահատկությունն այնպիսինն է, որ երեխան ընդունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավելի:

Վեց տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն և իրավիճակային են, դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ այն դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ:

Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ:

Վեց տարեկան երեխաներին ուսուցանելը դժվար է, ընդ որում՝ այսպիսի ուսուցումը պետք է հաշվի առնի նրանց զարգացման առանձնահատկությունը: Վեց տարեկան երեխաների զարգացման տարբեր կողմերի հետազոտությունները ցույց են

տվել, որ նրանք իրենց հանգիստ, հարմարավետ, ինքնավստահ են զգում մանկապարտեզի նախապատրաստական խմբերում ուսուցանման ժամանակ՝ ի տարբերություն դպրոցի առաջին դասարանի։ Գլխավոր պատճառն այն է, որ մանկապարտեզի կենսառիթմը, մեծահասակի և հասակակիցների հետ շփման ոճը առավել համապատասխանում է երեխայի հոգեկան զարգացման մակարդակին։ Իր սոցիալական անկայունության, նոր պայմաններին և հարաբերություններին հարմարման դժվարությունների պատճառով վեց տարեկան երեխան կարիք ունի անմիջական հուզական կոնտակտի, բայց դպրոցական ուսուցման ֆորմալիզացված պայմաններում այդ պահանջմունքը չի բավարարվում[3]։

Իսկ ի՞նչ է տեղի ունենում երեխայի հետ, երբ նա, հայտնվում է դպրոցական ուսուցման ֆորմալիզացված համակարգի մեջ, որում բավարար չափով հաշվի չեն առնվում նրա տարիքային առանձնահատկությունները։ Ինչպես ցույց են տվել դպրոցում իրականացված կոմպլեքս հետազոտությունները, անբարենպաստ պայմաններում հաճախ վատանում է երեխաների առողջական վիճակը, կարող է քաշը պակասել, նվազել հեմոգլոբինի քանակն արյան մեջ, իջնում է տեսողության սրությունը, ի հայտ են գալիս գլխացավեր։

Ընդհանուր ինքնազգացողության վատացման պատճառով՝ նվազում է երեխայի ոչ այնքան բարձր աշխատունակությունը, ինչը բացասաբար է ազդում ուսման վրա։ Առանձին դեպքերում առաջանում են նևրոզներ, դպրոցական դեզադապտացիա. նրանք լարված են և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես։ Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ։ Սովորաբար առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության երկու ասպեկտներ՝ անձնային և ինտելեկտուալ։ Երկուսն էլ կարևոր են ինչպես ուսումնական գործունեության հաջող ընթացքի, այնպես էլ նոր պայմաններին արագ հարմարման համար։ Որպեսզի երեխան հաջողությամբ սովորի, նա առաջին հերթին

---

[3] Белопольская Н. Л., Психологическое исследование половозрастной идентификации у детей со сниженным интеллектом, Дефектология, 1992, էջ 17

պետք է ձգտի նոր դպրոցական կյանքին, «լուրջ» պարապմունքներին, «պատասխանատու» առաջադրանքներին։ Այսպիսի ցանկության առաջացման վրա ազդում է ուսման՝ որպես կարևոր, բովանդակային գործունեության նկատմամբ, մոտիկ մեծահասակների վերաբերմունքը։ Ազդում է և այլ երեխաների վերաբերմունքը, հնարավորությունը՝ բարձրանալու նոր տարիքային աստիճան փոքրիկների աչքերում և համեմատվել ավագների հետ։ Արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է դպրոցականի ներքին դիրքորոշումը։ Սկզբնապես երեխաներին գրավում են դպրոցական կյանքի արտաքին ատրիբուտները՝ գրիչները, տետրերը, դասարանը և այլն։ Նոր տպավորությունների, նոր մթնոլորտի պահանջմունք է առաջանում, ցանկություն՝ ձեռք բերելու նոր ընկերներ։ Եվ միայն հետո սովորելու, ինչ-որ նոր բան իմանալու, գնահատական ստանալու ցանկություն է առաջանում։

Նոր սոցիալական դիրքի նկատմամբ երեխայի ձգտումը նախադրյալ է և հիմք կրտսեր դպրոցական տարիքում հոգեբանական շատ առանձնահատկությունների կայացման համար։ Մասնավորապես, պատասխանատվությունը դպրոցական պարտականությունների կատարման համար. երեխան սկսում է կատարել ոչ միայն իրեն հետաքրքիր առաջադրանքները, այլև ցանկացած ուսումնական աշխատանք։ Դպրոց ընդունվող երեխայի համար կարևոր է նաև ուսուցչի, տարեկիցների և իր նկատմամբ վերաբերմունքը։

Նախադպրոցական տարիքի վերջում պետք է մեծահասակների հետ հաստատվի ոչ իրավիճակային-անձնային շփում։ Ուսուցանման դաս-դասարանային համակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի հետ, այլև այլ երեխաների հետ հատուկ հարաբերություններ։ Ուսումնական գործունեությունն իր բնույթով կոլեկտիվ գործունեություն է։ Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ գործնական հաղորդակցմանը, արդյունավետ փոխազդելու կարողությանը՝ կատարելով համատեղ ուսումնական գործողություններ։ Հասակակիցների հետ շփման նոր ձևը հաստատվում է դպրոցական ուսուցման հենց սկզբից։

Հոգեկան զարգացման բարձր մակարդակով վեց տարեկան երեխաների համար բնութագրական է համագործակցային-մրցակցային շփումը տարեկիցների հետ։ Նրանք հետևում են ընդհանուր խաղային նպատակին, բայց միմյանց համարում են մրցակիցներ, հակառակորդներ։ Նրանք պլանավորում են իրենց գործողությունները՝

կանխատեսելով արդյունքը, հետևելով ընկերոջ գործողություններին, փորձելով նրան խանգարել։

Դպրոցին անձնային պատրաստվածությունը ներառում է նաև որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ։ Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է համարժեք վերաբերմունք սեփական ընդունակությունների, աշխատանքային արդյունքների, վարքի նկատմամբ, այսինքն՝ ինքնագիտակցության զարգացվածության որոշակի մակարդակ։ Դպրոցականի ինքնագնահատականը չպետք է լինի շատ բարձր և չտարբերակված։ Դպրոցին երեխայի պատրաստվածության մասին սովորաբար դատում են խմբային աշխատանքներում նրա վարքով։ Այստեղ շատ կարևոր է նաև երեխայի կամային ոլորտի զարգացման առանձնահատկությունների դուրս բերումը։ Երեխայի վարքի կամային բնույթը դրսևորվում է ուսուցչի առաջադրած պահանջների, կանոնների կատարման ժամանակ։ Դրա համար էլ երեխայի կամային վարքի առանձնահատկությունները դուրս են բերվում ոչ միայն դիտման ժամանակ, այլև հատուկ մեթոդիկաների միջոցով։ Ինտելեկտուալ պատրաստվածությունը կապված է մտավոր գործընթացների զարգացման հետ. ընդհանրացնելու, առարկաները համեմատելու, դասակարգելու, նրանց էական առանձնահատկությունները դուրս բերելու, պատճառա-հետևանքային կապերը գտնելու, եզրակացություններ կատարելու ընդունակություններ։ Երեխան պետք է ունենա լայն պատկերացումներ՝ պատկերային, տարածական, խոսքի զարգացման համապատասխան մակարդակ, ճանաչողական ակտիվություն[4]։

Դպրոցին հոգեբանական պատրաստվածության դիագնոստիկան բավականին բարդ, բայց միանգամայն լուծելի խնդիր է։ Դպրոցական պատրաստվածությունը, կապված ուսման հաջող սկզբի հետ, պայմանավորում է երեխաների զարգացման առավել բարենպաստ տարբերակը։ Բայց կան նաև զարգացման այլ տարբերակներ, որոնք պահանջում են շտկողական աշխատանքներ։ Դպրոց ընդունվելիս երբեմն

---

[4] Смирнова О.Е. Лучшая подготовка к школе – беззаботно прожитое детство, Дошкольное воспитание, 2006, էջ 91

հայտնաբերվում է զարգացման որոշակի բաղադրիչի անբավարար ձևավորվածություն։ Շատ մանկավարժներ գտնում են, որ ուսուցանման գործընթացում ավելի հեշտ է զարգացնել ինտելեկտուալ, քան անձնային առանձնահատկությունները։ Ըստ երևույթին՝ նրանք ճիշտ են։

Ամեն դեպքում երեխայի՝ դպրոցին անբավարար անձնային պատրաստվածության դեպքում ուսուցչի համար առաջանում են բավական բարդ խնդիրներ։ Այսպիսի երեխաները դրսևորում են մանկական անմիջականություն, դասերին միանգամից են պատասխանում՝ առանց ձեռք բարձրացնելու, ուրիշներին ընդհատելով, կիսվում են ուսուցչի հետ իրենց զգացումներով, մտքերով։ Ունենալով շատ բարձր ինքնագնահատական՝ նրանք նեղանում են դիտողություններից։ Նրանք դժգոհում են, որ դասերն անհետաքրքիր են, դպրոցը լավ չէ, ուսուցիչը չար է։ Այսպիսի երեխաների դրդապատճառային ոլորտի անհասունությունն իր հետ բերում է գիտելիքի ձեռք բերման խնդիրներ, ուսումնական գործունեության ցածր արդյունավետություն։

Ինտելեկտուալ անպատրաստությունը հանգեցնում է ուսումնական գործողությունների անհաջողության, հասկանալու և ուսուցչի պահանջները կատարելու անհնարինության, հետևաբար՝ ցածր գնահատականների։ Սա իր հերթին ազդում է երեխայի մոտիվացիայի վրա։ Ինտելեկտուալ անպատրաստվածության դեպքում հնարավոր են զարգացման մի քանի տարբերակներ։ Կապված որոշակի անձնային առանձնահատկությունների հետ՝ երեխաները կարող են նշանակալից դժվարություններ ունենալ դպրոցում, ինչպես, օրինակ, տագնապայնություն, որը կայունություն է ձեռք բերում երեխայի աշխատանքով անընդհատ դժգոհության պայմաններում[5]։

Տագնապայնության աճի և նրա հետ կապված ցածր ինքնագնահատականի պատճառով նվազում են ուսումնական ձեռքբերումները։ Ստացվում է, որ երեխայի անբարենպաստ անձնային առանձնահատկություններն ուղղակիորեն ազդում են

---

[5] Божович Л.И., Проблема развития мотивационной сферы ребенка: изучение мотивации поведения детей и подростков, М.: Академия, 2005, էջ 198

նրա ուսումնական գործունեության վրա, ինչը առաջ է բերում շրջապատողների համապատասխան բացասական ռեակցիան։ Այսպիսի իրավիճակից խուսափելու համար պետք է փոխել ծնողների և ուսուցիչների գնահատականներն ու դիրքորոշումները։

Այսպիսով, վեց տարեկան երեխաներն իրենց զարգացման մակարդակով նախադպրոցականներ են։ Նրանք չեն կարող լիարժեք զարգանալ դպրոցական համակարգի խիստ ֆորմալիզացված պայմաններում։ Այս տարիքի երեխաների ներառումը ուսումնական գործունեության մեջ պահանջում է հատուկ պայմաններ. «նախադպրոցական» ռեժիմ, ուսուցանման խաղային մեթոդներ և այլն։ Առաջին դասարան վեց տարեկանների ընդունման հարցը պետք է անհատական լուծվի՝ ելնելով դպրոցին երեխայի հոգեբանական պատրաստվածությունից։

2. ՎԵՑԱՄՅԱ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ

Դպրոցական շրջանում մտավոր զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկը երեխայի հոգեբանական պատրաստվածությունն է դպրոցին: Երեխաներին դպրոց պատրաստելը բազմակողմանի խնդիր է, որը ներառում է երեխայի կյանքի բոլոր ոլորտները:

Տեսական աշխատանքներում Բոժովիչը հիմնական շեշտը դրվել է երեխայի անհատականության ձևավորման գործում մոտիվացիոն ոլորտի կարևորության վրա: Նույն տեսանկյունից դիտարկվել է հոգեբանական պատրաստվածությունը դպրոցի համար, այսինքն՝ մոտիվացիոն պլանը ճանաչվել է ամենագլխավորը: Բացահայտվել են դասավանդման շարժառիթների երկու խումբ՝

- Սովորելու լայն սոցիալական դրդապատճառներ, որոնք կապված են «այլ մարդկանց հետ հաղորդակցվելու, նրանց գնահատման և հաստատման երեխայի կարիքների հետ, իրեն հասանելի սոցիալական հարաբերությունների համակարգում որոշակի տեղ զբաղեցնելու երեխաների ցանկությունների հետ»,
- կրթական գործունեության հետ անմիջականորեն կապված դրդապատճառներ, կամ «երեխաների ճանաչողական հետաքրքրությունները, ինտելեկտուալ գործունեության անհրաժեշտությունը և նոր հմտություններ, կարողություններ և գիտելիքներ ձեռք բերելը»:

Վեցամյա երեխան, ով պատրաստ է դպրոցին, ցանկանում է սովորել և՛ այն պատճառով, որ ցանկանում է որոշակի դիրք զբաղեցնել մարդկային հասարակության մեջ, այն է՝ այնպիսի դիրք, որը բացում է հասունության աշխարհը, և այն պատճառով, որ նա ունի ճանաչողական կարիք, որը չի կարող բավարարել տանը: Այս երկու կարիքների միաձուլումը նպաստում է շրջակա միջավայրի նկատմամբ երեխայի նոր վերաբերմունքի առաջացմանը, որը կոչվում է «աշակերտի ներքին դիրքը»: Այս նորագոյացությունը Բոժովիչը. շատ կարևորեց՝ համարելով, որ «աշակերտի ներքին դիրքը» կարող է լինել դպրոցական պատրաստության չափանիշ:

Անհրաժեշտ է առանձնացնել և դիտարկել վեցամյա երեխայի դպրոցական հոգեբանական պատրաստվածության հիմնական բաղադրիչները:

Ֆիզիկական պատրաստվածություն: «Ֆիզիկական զարգացում» հասկացությունները հաճախ շփոթվում են, ուստի հարկ է նշել, որ ֆիզիկական պատրաստվածությունը ֆիզիկական պատրաստվածության արդյունք է, որը ձեռք է բերվել շարժիչ գործողություններ կատարելիս, որոնք անհրաժեշտ են մարդուն տիրապետելու կամ որոշակի գործունեության իրականացման համար: Օպտիմալ ֆիզիկական պատրաստվածությունը կոչվում է ֆիզիկական պատրաստվածություն:

Ծնողները և ուսուցիչները, անշուշտ, հետաքրքրված են իրենց երեխայի դպրոցական հաջողություններով: Այս հաջողությունները մեծապես կախված են համակարգված ուսուցման մարմնի պատրաստվածությունից, մտավոր գործընթացների պատրաստակամությունից և անհատի պատրաստվածությունից: Մարմնի պատրաստվածությունը որոշվում է մորֆոլոգիական և ֆունկցիոնալ զարգացմամբ: Եթե երեխան ֆիզիկապես թուլացած է, նրա համար դժվար կլինի կեցվածքը պահել գրասեղանի մոտ նստած, իսկ արագ հոգնածության պատճառով դժվար կլինի դասարանում աշխատել: Գրելու վարպետության համար կարևոր է փոքր մկանային խմբերի զարգացումը: Բացի այդ, երեխան պետք է զարգացնի նաև մեծ մկանային խմբեր, վազքի, ցատկելու, մագլցելու, նետելու և այլնի հիմնական շարժիչ հմտությունները: Սա կօգնի նրան վերահսկել իր մարմինը, մասնակցել խաղերին, մրցումներին և ընկերների հետ շփվելուն:

Մոտիվացիոն պատրաստվածություն: Մոտիվացիոն պատրաստակամությունը ենթադրում է վերաբերմունք կրթական գործունեության նկատմամբ որպես սոցիալապես նշանակալի հարցի և գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն: Այս դրդապատճառների ի հայտ գալու նախապայմանը երեխաների դպրոց գնալու ընդհանուր ցանկությունն է և հետաքրքրասիրության զարգացումը:

Որպեսզի երեխան հաջողությամբ սովորի, առաջին հերթին պետք է ձգտի նոր դպրոցական կյանքի, «լուրջ» ուսման, «պատասխանատու» հանձնարարությունների: Նման ցանկության առաջացման վրա ազդում է մեծահասակների վերաբերմունքը ուսմանը որպես կարևոր բովանդակալից գործունեության, շատ ավելի նշանակալի, քան նախադպրոցական երեխայի խաղը: Ազդում է նաև այլ երեխաների վերաբերմունքը, փոքրերի աչքում նոր տարիքային մակարդակի բարձրանալու և մեծերի հետ դիրքում հավասարվելու հենց հնարավորությունը: Երեխայի՝

սոցիալական նոր դիրք զբաղեցնելու ցանկությունը հանգեցնում է նրա ներքին դիրքի ձևավորմանը:

Անձնական պատրաստվածությունը դպրոցին ներառում է նաև որոշակի վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: Արտադրողական կրթական գործունեությունը ենթադրում է երեխայի համարժեք վերաբերմունք իր կարողություններին, աշխատանքի արդյունքներին, վարքագծին, այսինքն. ինքնագիտակցության զարգացման որոշակի մակարդակ. Երեխայի անձնական պատրաստակամությունը դպրոցին սովորաբար գնահատում են նրա պահվածքով խմբային դասերին և հոգեբանի հետ զրույցի ընթացքում:

Մտավոր պատրաստվածություն: Ճանաչողական գործընթացների զարգացման բավական բարձր մակարդակի ձեռքբերում (տարբերակված ընկալում, կամավոր ուշադրություն, բովանդակալից անգիր, տեսողական-փոխաբերական մտածողություն, տրամաբանական մտածողության յուրացման առաջին քայլերը):

Ավելի մեծ նախադպրոցական տարիքում երեխաները ձեռք են բերում որոշակի հայացք, որոշակի գիտելիքների պաշար և տիրապետում են առարկաների արտաքին հատկությունները ուսումնասիրելու որոշ ռացիոնալ եղանակների: Նախադպրոցականներին հասանելի են գիտական գիտելիքների հիմքում ընկած ընդհանուր կապերը, սկզբունքները և օրինաչափությունները: Մտածողության տրամաբանական ձևը, թեև հասանելի, բայց դեռ բնորոշ չէ նրան: Անգամ ձեռք բերելով ընդհանրացման հատկանիշներ՝ նրա մտածողությունը մնում է փոխաբերական՝ հիմնված առարկաների և դրանց փոխարինողների հետ իրական գործողությունների վրա: Տեսողական-փոխաբերական մտածողության բարձրագույն ձևերը նախադպրոցական տարիքի երեխայի ինտելեկտուալ զարգացման արդյունքն են[6]:

Զգացմունքային-կամային պատրաստվածություն: Կամային պատրաստակամությունը երեխայի կարողությունն է գործել մոդելին

---

[6] Гуткина Н.И., Психологическая готовность к школе: Руководство практического психолога, М.: Академический проспект, 2000, էջ 85

համապատասխան և վերահսկողություն իրականացնել՝ համեմատելով դրա հետ որպես ստանդարտ (մոդելը կարող է տրվել մեկ այլ անձի գործողությունների կամ կանոնի տեսքով)։ Զգացմունքային-կամային պատրաստակամությունը համարվում է ձևավորված, եթե երեխան գիտի նպատակ դնել, որոշում կայացնել, ուրվագծել գործողությունների ծրագիր, ջանքեր գործադրել դրա իրականացման համար, հաղթահարել խոչընդոտները։ Այս պարագայում նրա մեջ ձևավորվում է հոգեբանական գործընթացների կամայականություն։

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններ են սովորողի հաղորդակցման մակարդակը, ուսուցչի աջակցությունը: Կարևոր են նաև սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունը: Կրտսեր դպրոցում սովորողների ինտեգրման դժվարությունների բացահայտման համար մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հարցումներ ուսուցիչներիշրջանում: Ներկայացնենք արդյունքները՝

Հարց 1. Ի՞նչ դժվարությունների են հանդիպում առաջին դասարանցիները դպրոց ոտք դնելուն պես:

ա. ուսումնական,

բ. սոցիալական,

գ. հոգեբանական,

դ. այլ

Հարցման արդյունքները վկայում են, որ կրստեր դպրոցականների շրջանում հարմարման գործընթացում առավել գերակշռում են հոգեբանական դժվարությունները՝ 40%, ինչը խոսում է հոգեբանական ծառայությունների անհրաժեշտության մասին:

Հոգեբանական դժվարություններից նշում էին դրական փոխհարաբերությունների ձևավորելը, երեխաներն ունենում են հուզական ապրումներ՝ կապված մանկապարտեզից, խաղերից հեռանալու հետ: Հարցված մանկավարժների 20%–ը նշեց, որ դժվարությունները հիմնականում ուսումնական են, քանի որ երեխաները մանկապարտեզից, խաղային վիճակներից միանգամից տեղափոխվում են ուսումնական հստակ մշակված ու սահմանված միջավայր, որտեղ առաջնայինը ուսուցումն է: Նրանք մատնանշում էին ուսումնական տեղեկատվությունը յուրացնելու և համակարգելու դժվարությունները: Հարցված

դասվարների 40%–ն էլ նշում է, որ առաջին դասարանում երեխաները հիմնականում հանդիպում են ինտեգրման սոցիալական դժվարությունների, նոր կոլեկտիվում հարմարմանը, ժամային գրաֆիկին, նոր միջավայրում ընդունված նորմերին և կանոններին:

Հարց 2. Կրտսեր դպրոցականները առաջինը ումի՞ց են ակնկալում աջակցություն:

ա. դասվարից,

բ. ծնողներից,

գ. սոցիալական մանկավարժից,

դ. ընկերներից,

ե. հոգեբանից

Հարցման մասնակից դասվարների կարծիքով երեխաների 32,2 %–ը աջակցություն առաջինը սպասում է դասվարից: Սա բացատրվում է նրանով, որ դասվարն օրվա մեծ հատվածը երեխաների հետ է և աջակցում է նրանց՝ նոր միջավայր արդյունավետ ինտեգրմանը: Հարցվածների 41,1 %–ը գտնում է, որ երեխաները աջակցությունը հիմնականում սպասում են ծնողներից, և սա բնական երևույթ է այդ տարիքում, քանի որ նրանք դեռևս շատ են կախված ծնողներից, և իրենց պաշտպանը, իդեալը ծնողն է: Հարցվածների 11,2 %–ը գտնում է, որ երեխաների ինտեգրման դժվարությունները սոցիալական մանկավարժի խնդիրն է, սակայն այսօր ոչ բոլոր դպրոցներում է աշխատում սոցիալական մանկավարժ: 12,3 %–ը դժվարությունների հաղթահարման աջակցությունը փնտրում է հոգեբանական ուղղորդված գործունեության մեջ, սակայն նույնպես պետք է փաստենք, որ ոչ բոլոր դպրոցներում է այսօր աշխատում հոգեբան:

Այսպիսով՝ ուսումնառության առաջին շրջանում դպրոցի կրթական միջավայր սովորողների ինտեգրումը սոցիալ–մշակութային նոր միջավայրում նոր հարաբերությունների ձևավորման գործընթաց է, որում առանձնանում են ուսումնական, հոգեբանական, սոցիալ–մշակութային և մասնագիտական ուղղությունները: Դպրոց ինտեգրման գործընթացի արդյունավետությունը մեծ չափով կախված է ուսուցչի անձնային և մասնագիտական որակներից, մանկավարժական

տակտից և սոցիալ–մշակութային կոմպետենցիաների ձևավորվածությունից, հաղորդակցման ճկուն, ըստ իրավիճակի ոճերի տիրապետման հմտություններից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նյութից հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

- Վեցամյա երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է կարևորել ուսումնական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը,
- Ուսուցան բովանդակությամբ են որոշվում երեխայի մտավոր զարգացման ընդհանուր տիպը և կառուցվածքը,
- Խաղը լավագույն միջոցն է պարզելու, թե երեխան որքանո՞վ է պատրաստ հաճախել դպրոց,
- Համագործակցելով կոլեհաների, երեխաների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ կարելի է կարճ ժամանակահատվածում պատրաստել բոլոր վեցամյա երեխաներին հաճախել դպրոց,
- Երեխային նախապատրաստել ուսումնական գործունեությանը նշանակում է տարբեր ճանապարհներով և ամենաբազմազան միջոցներով օժանդակել, որ ավագ նախադպրոցականը ձեռք բերի մտածողական գործողություններ կատարելու որոշակի ունակություններ,
- Դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր այն ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվեն ու զարգանան դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ:

Մեր կարծիքով դպրոցի կրթական միջավայր ինտեգրման կարևոր պայմաններ են սովորողի հաղորդակցման մակարդակը, ուսուցչի աջակցությունը: Կարևոր են նաև սովորողի անձնային առանձնահատկությունները, հուզական ներաշխարհը, բնավորությունը, խառնվածքը, բարոյակամային որակները, հետաքրքրությունները, պատկերացումները, աշխարհընկալումը, հակումները, ինքնակառավարման կարողությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկյան և ուրիշներ Լ., Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2008
2. Белопольская Н. Л., Психологическое исследование половозрастной идентификации у детей со сниженным интеллектом, Дефектология, 1992
3. Божович Л.И., Проблема развития мотивационной сферы ребенка: изучение мотивации поведения детей и подростков, М.: Академия, 2005
4. Гуткина Н. И., Психологическая готовность к школе. 4-е изд., перераб. и дополн. СПб.: Питер, 2004
5. Гуткина Н.И., Психологическая готовность к школе: Руководство практического психолога, М.: Академический проспект, 2000
6. Смирнова О.Е. Лучшая подготовка к школе – беззаботно прожитое детство, Дошкольное воспитание, 2006